

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ «ՍԱՍՄԱ ՄՀԵՐ» ՎԻՊԵՐԴԻ ԱՆԱՎԱՐՏ
ԵՐՐՈՐԴ ՏԱՐԲԵՐԱԿԸ

Հ. Ս. ԱՔԵՂՅԱՆ

1939 թ. հանդիսավորությամբ տոնվեց «Սասունցի Դավիթ» դյուցազնավեպի 1000-ամյա հոբելյանը, որի նախապատրաստական աշխատանքները սկսվել էին դեռևս 1938 թ.: Տոնակատարությանն իր գործուն մասնակցությունն ունեցավ նաև մեծ վարպետը՝ Ավետիք Իսահակյանը, հանգես գալով հետաքրքրական հոդվածներով, ելույթներով, ինչպես նաև «Փորձ մեր էպոսի գիցաբանության մասին» ուսումնասիրությամբ: Մեր ազգային էպոսի հոբելյանը առիթ տվեց բանաստեղծին՝ նորից անդրադառնալու իր վիպերգին: Այս մասին վկայում է Իսահակյանը՝ «Գրական թերթի» աշխատակցի հետ ունեցած զրույցում. «Մեր հոյակապ էպոս «Սասունցի Դավիթի» հազարամյա հոբելյանի կապակցությամբ գրում եմ մեկ հոդված, որտեղ խոսելու եմ այն մասին, թե ինչպես եմ գրել ես «Սասմա Մհերը», ինչպես եմ հասկացել մեր անմահ էպոսը և ինչպես եմ այն օգտագործել»¹: Իսկ «Հայ գրականության տասնօրյակը Մոսկվայում» հոդվածում (1941) բանաստեղծը գրում է. «Օգտվելով մեր ամենահարուստ ֆոլկլորից, ես մշակեցի «Սասմա Մհեր» էպոսը և այժմ աշխատում եմ նրա վրա, լրացնելով այն»²: Այսպիսով, արդեն ավարտած իր վիպերգի նոր վերամշակումը Իսահակյանը սկսել է հենց տոնակատարության ժամանակ, վերջին հրատարակությունից (1938) հետո և շարունակել մինչև կյանքի վերջին շրջանը՝ 1956 թ.:

«Սասմա Մհերի» վերջին մշակմանը վերաբերող բազմաթիվ սևագիր էջերը, ձեռագրային նշումները, պոեմի 1938 թ. առանձին հրատարակության վրա կատարած ուղղումները, գրառումները³ վկայում են բանաստեղծի երկարատև ու հանգամանալից պրպտումների ու մտորումների մասին:

Ի՞նչ փոփոխություններ է նախատեսել Իսահակյանը իր վիպերգում: «Գրական թերթի» թղթակցի հետ ունեցած վերոհիշյալ զրույցի ժամանակ նա նշել է. «Շուտով կավարտեմ նաև «Սասմա Մհերի» 2—3 հավելյալ գլուխները»: Պոեմի երրորդ մշակման սևագիր նյութերը հիմք են տալիս եզրակացնելու, որ «հավելյալ գլուխները» բովանդակելու էին՝ ա) Մհերի պայքարն օտար նվաճողների դեմ, բ) Մհերի սերը: Արվելու էին նաև այլ հավելումներ ու փոփոխություններ:

Անդրադառնանք «Սասմա Մհերի» երրորդ մշակման ժամանակ Իսահակյանի ծրագրած փոփոխություններին ու հավելումներին:

¹ «Գրական թերթ», 1939, հունիսի 30, № 18:

² Ա.վ. Իսահակյան, Երկեր, հատ. 4, Երևան, 1959, էջ 268—269:

³ Այդ նյութերն անտիպ են և գտնվում են Իսահակյանի արխիվում, նրա ժառանգների մոտ:

* * *

էպոսի հոբելյանական տոնակատարութիւնը տեղի էր ունենում մի այն-
պիսի ժամանակաշրջանում, երբ քաղաքական իրավիճակը պահանջում էր ժո-
ղովրդի մաքառման ոգին բարձրացնող ստեղծագործութիւններ:

Զգալով այս պակասն իր վիպերգում և էպոսին առավել ևս հարազատ
մնալու ձգտումից ելնելով՝ Իսահակյանը մտադրվում է Մհերին կովի դուրս
բերել «իւր երկրի թշնամիների դէմ, որոնք հրով ու սրով ծանր հարկերով ուղում
են ստրկացնել Հայաստանը»⁴: Սա կօգնէր նաև Մհերի կերպարն ազատելու որոշ
միակողմանիութիւնից:

«Սասմա Մհերի» երրորդ մշակմանը վերաբերող գրառումներում (1940-ա-
կան թթ.) մենք հանդիպում ենք այսպիսի ծրագրային նշումների՝ «Սհերը և
արտաքին թշնամիները», «Մհերը կովում է արտաքին թշնամիների դէմ», կամ՝
«Մհերը կովում է ներքին և արտաքին թշնամիների դէմ: Ներքին՝ հարստա-
հարիշների, շահագործողների, արտաքին՝ Մսրա դէմ, Մսրա Մելիքի ժառանգ-
ների դէմ, որ գալիս էին նորից հարկ պահանջելու, գալիս էին լուծի տակ քա-
շելու հայ ժողովրդին»:

«Սասնա ծռերի» բոլոր պատումներում բավական հանգամանալից պատ-
կերված է Դավթի կռիվը օտար նվաճողների դէմ և հաղթանակը: (Դա ինքնին
հասկանալի է, քանի որ Դավթին է էպոսում դառնում գործողութիւնների հիմ-
նական առանցքը): Մհերի գործողութիւններն այս ուղղությամբ շատ ավելի
սահմանափակ են նկարագրված, և բանաստեղծը երբեմն դիմում է նաև Դավթի
հետ կապված որոշ մանրամասների, քանի որ «Դյուցազն Դավթի մեջ լրիվ
կերպով շոշափվում է հայ ժողովուրդը: Դավթը հայրենասեր է, ժողովրդասեր,
ռամիկի և աշխատավորների պաշտպան, անձնուրաց քաջ է, մարդասեր և խա-
ղաղասեր...»⁵:

Մսրա Մելիքի ժառանգները գալիս են Սասունից քսան տարվա հարկը
վերցնելու, հակառակ դեպքում նրանք սպառնում են ավերել երկիրը: Մհերը
դուրս է գալիս նրանց դէմ և ջարդելով՝ դուրս անում երկրից: Իսահակյանը
մտադիր է եղել Մհերին ճանապարհին հանդիպեցնել հարկահաններին:
«1941 թ., 10 հունիսի» թվագրված թերթիկում կարդում ենք. «Այնտեղից Մհերը
ելնում է, գնում է: Ճանապարհին ձիավորներ, ուղտերի քարավան. Մսրա-Մե-
լիքի թոռներն են՝ հարկի համար են եկել, սպառնալից: Մհերը կանգնում է նը-
րանց առաջ. — Ձեր եկած ճամփով ե՛տ դարձեք, թե չեք ուղում մեռնել. Մսրա
Մելիք ի՞նչ բան ունի քստեղ, Սասմա տերը Սասունն է, դուք ինչ բան ունեք
էստեղ»: Մեկ այլ տեղ նա ճշտում է հանդիպման վայրը. «Երբ Մհերը գնում էր
դեպի Պղնձե քաղաք, ուր տեսավ նա մի բանվորի մահը, — մինչև հասնելը տե-
սավ մի խումբ ձիավոր է գնում, ոսկե սարքով, և ծառաները ետևներից վա-
զելով...»: Ըշտում է նաև, որ հարկահավաքները ո՛չ միայն Մելիքի թոռներն են,
այլև Կողբագիւնի ու Զաղիի:

Գրառում-թերթիկների թվագրութիւնից ելնելով ասենք, որ ավելի ուշ
Իսահակյանը նախատեսում է մի կարևոր ներմուծում կատարել՝ Մհերի մար-

⁴ Ա.վ. Իսահակյան, Փորձ մեր էպոսի դիցարանութիւն մասին, Երկերի ժողովածու,
հատ. 4, Երևան, 1951, էջ 80:

⁵ Նույն տեղում, էջ 76:

տունակ ոգին ավելի հիմնավորելու համար: Նախքան մտքիներին հանդիպեցնելը, նա նպատակահարմար է գտնում Մհերին տանել դարբնոց. «Մհերը եղավ նաև դարբինի աշակերտ: Դա շատ հարմար և պատշաճ գործ է, երկաթի, կրակի, ուժի, մուրճի, սալի, կռանի, կռել-կոփելու հետ գործ ունենալը...»: Դարբնոցում զենքեր կոփող Մհերն, ինքնին հասկանալի է, առավել ուժով կլինեմ, ավելի համարձակ կարող էր դուրս գալ թշնամու դեմ:

Կատարելիք հավելման վերաբերյալ Իսահակյանի մտահղացման մասին առավել ամբողջական պատկերացում է տալիս 1944 թ. հունվարի 17 թվագրությամբ գրառումը, վերնագրված՝ «Մհերը և արտաքին թշնամիները»: «...Մհերը դարբինի աշակերտ էր. սովորում էր խոփ, նիզակ, աշտե, սուր շինել, երբ մի օր լսեց, որ Մսրա Մելիքի տղաները և ծառաները՝ Կոզբազնու տղան և այլն... եկել են Տարոնա աշխարհը, խստորեն հարկ են պահանջում, ասելով. — «Դուք մեր հարկատուն եք, Դավիթը չկա, հիմի երկիրն անտեր է, մենք ենք Սասմա աշխարհի տերը, հին ժամանակվա պես»:

Ժողովրդի մեծերն ասում են. «Երկիրն անտեր է, Դավիթը մեռել է. ո՞վ պիտի մեզ պաշտպանե, Ճնճղափորիկը ասել է, որ հարկը տանք, հնար չկա ուժի դիմաց ուժ դնենք»:

Մհերն ասում է. «Ես կամ, երկրի տերը ես եմ, Դավթի աթոռքի տերը ես եմ»:

Եվ կոտորելով մարցիներին՝ ասում է. «Գնացեք հայրենիք, և իմացեք, որ Հայու աշխարհը տեր ունի, էլ ոտք չկոխեք, Մհերն է ձեր դեմ կովողը՝ Դավթի տղեն»:

Սրանից հետո է, որ վճռվում է բերդ շինել, հավաքել կտրիճներին և կռիվ մղել թշնամիների դեմ՝ ներքին և արտաքին, նոր, ազատ աշխարհ ստեղծել, որ աշխատող մարդն իր երկրի, հացի տերը լինի...»:

Այս ծրագրային գրառումը կատարելիս Իսահակյանը որոշ չափով հիմք է ընդունել Գ. Հովսեփյանի «Դավիթ և Մհեր» պատումը⁶. Մհերն ամուսնանալով գնում է Ադրբեջան և թագավորում այնտեղ, այնինչ Սասնա վրա կրկին կախվում է օտարների նոր հարձակման վտանգը, և՛

Ձևով Հովան էլավ,
Թուղք ցամբխից դախ Մհեր, էսաց. «Մհե՛ր,
Կուգբաղնը՝ ազգական տղե՛ք էլած ին, կտրնացած
էկած Սասմա ֆաղփի դավին կ'ենին.
Բս չիմ կերի, իմ կրվար չի հաղբը.
Կ'ըլնիս, կը կաւս, խասնիս»:

Մհերը շտապում է օգնություն, և ուրախացած հորեղբայրը ողջունում է նրան..

էսաց.— Տա խագա՛ր բարով էկար.
էսաց.— Իս գլտիմ՝ ֆա խեր Դավրի տեղ կը բոնիս:
էսաց.— Վո՞վն ի՛ ֆենե բան կը ֆաստա:
էսաց.— Կուգբաղնի բոռներն ին. էսաց.
Չուրս բոռ ին, չուրսն էլ աման կը տան գազան:

⁶ «Սասնա ծոռո», հատ. Ա, Ե պատում, Երևան, 1936, էջ 228:

Ուշինչ չէր կարող սարսափեցնել արիասիրտ սասունցուն, և նա անմիջապես

Զուր ձին խեծավ, բշից Լոռա դաշտ:

Լոռա դաշտ տեսավ՝ Կուզբաղնո՛ւ երկու միծ տղեն եկավ...:

Մհերը բռնում է նրանց, կապում, բերում է հորեղբոր մոտ. «Մին փնչից տռան էս յան, մեկ՝ էն յան»: Ապա հաշվեհարդար է տեսնում նաև մյուսների հետ:

Նկատենք, որ Իսահակյանն ուշադրության է առել ժողովրդական ստեղծագործության միայն այս պատումում շեշտված մի հանգամանք. ժամանակի ընթացքում Հայաստանը ասպատակելու հերթը հասել է առգեն թշնամու ժառանգներին, տվյալ դեպքում՝ թոռներին: Իր գրառումներում Իսահակյանը, ինչպես տեսնում ենք, նույնպես ընդգծում է այն, որ Մհերը գործ ունի Մսրա Մելիքի և մյուսների տղաների, թոռների հետ:

Իսահակյանը հատուկ ընդգծում է, որ Մհերի կռիվը հասարակ ժողովրդի հետ չէ. «Մհեր լախտը քաշում է, դարկում է մեծերին (ընդգծ. մերն է.— Հ. Ա.), մյուսները փախչում են...»: Կամ. «...Մհերը լախտը քաշեց, դարկեց. Մսրա-Մելիքի թոռան գլուխը թռավ, մարմինը մնաց, Կոզբաղինի թոռան գլուխը թռավ, մարմինը մնաց, Զադիի թոռան գլուխը թռավ, մարմինը մնաց. մնացածները՝ ծառաները (ընդգծ. մերն է.— Հ. Ա.) փախան Մսրա աշխարքը...»:

Իսահակյանի նպատակն է եղել ցույց տալ, որ օտառ նվաճողները սպառնալու են ասպատակության ենթարկելու ողջ Հայաստանը, ստրկացնելու ամբողջ հայ ժողովրդին. և այս առումով նրա գրառումներում զգացվում են որոշ երանգային տարբերություններ: Մի տեղ Մսրա զորքը գալիս է հարկ պահանջելու: Սասունից, մեկ այլ տեղ նրանք «եկել են Տառնա աշխարհը», իսկ մեկ ուրիշ տարբերակում «Մսրա-Մելիքի դարմը սիրտ է արել գալու Հայոց աշխարհ» և մտնելու Լաթարա հողը: «է՛յ, որտե՞ղ ես Դավիթ, գլուխդ վերցրու: էսօր եկել են Լաթար, վաղը Տարոն, Սասուն...»,— գրում է բանաստեղծը:

էս ու լսում է Մհերը, ասում է.—

Մհեր կա՛ Դավթի տղան,

Դավիթ կա՛ Սասմա իշխան:

Եվ հարձակվում է Մելիքի տղայի և զորքի վրա, մուրճով ջարդում է նրանց. մնացածները փախչում են, Մհերը ասում է. «էլ չգաք Հայոց աշխարհ, ձեզի խրատ՝ դարմե-դարմ»:

Իսահակյանն այս ամբողջ հավելումը ծրագրել էր կատարել Մհերի՝ Պղնձե քաղաք մտնելու դրվագից առաջ: Դրառումներից մեծ մասում (1940-ական թթ.) մարցիններին կոտորելուց հետո նա վերջում նշում է. «Մհերը մտավ Պղնձե քաղաք» կամ. «...Մհերը գնում է, ուզում է գնալ պապոնց երկիրը (Ծովյալ Խաթունի, Աղնանց). մտնում է Պղնձե քաղաք...» (1950-ական թթ.). Մհերը «շտրունակում է թափառել, անցնում է Պղնձե քաղաքի միջով...» (1950-ական թթ. առաջին կես). «Մհերը Մելիքի որդուն հալածելիս հետ դառնալով անցնում է Պղնձե քաղաքի միջով...»:

Ինչպես բոլոր էպոսներում, այնպես էլ «Սասունցի Դավթում» հիմնական տեղերից մեկը գրավում է սերը, և Իսահակյանի վիպերգում կատարված այս հավելումը ևս թելադրված է ժողովրդական էպոսին առավել մոտ լինելու ձրգ-

տումով: Բանաստեղծի գրառումներն ու սևագիր պատառիկները հուշում են այն մոտավոր սյուժեն, որը պետք է ունենար այս գլուխը՝ վիպերգի վերջնական (երրորդ) մշակումից հետո:

Մհերը՝ վտարված հարազատ տնից (ըստ մեկ այլ տարբերակի՝ Կապուտկողից) ճանապարհ է ընկնում, մտածելով՝ «զնալ, աշխարհ տեսնել»: Ճամփաբաժնին նա հանդիպում է երկու գուսանների, որոնք իրենց թագավորների աղջիկների գովքն էին անում: «Իրանի ճամփու գլխին նստողը երգեց, գովեց Իրանի շահի՝ թագավորի աղջկա գովքը (աճուն): Մյուսը՝ Գյուրջի թագավորի աղջկա՝ Գոհարիկի գովքը»: Մտածում է Մհերը ո՞ր կողմ զնալ և որոշում է մեկնել Վրաստան: «Մհեր վաղեց թուլուններից ցած՝ թուփերից բարձր՝ դեպի Վրաստան»,— կարդում ենք 1939 թ. գրառման մեջ: Մհերի հակումը դեպի Գյուրջի թագավորի աղջիկը ըստ մի այլ գրառման բացատրվում է նրանով, որ «ավելի գրավիչ էր նրա գեղեցկությունը»:

Տարբերակներից մեկում Վրաց արքայադստեր անունը ոչ թե Գոհար է, այլ Թամար-խաթուն, ըստ երևույթին վրաց աշխարհին ավելի հարազատ լինելու միտումով: Մհերը հասնում է Մցխեթ (Մեսխեթիա) այն պահին, երբ Թամարը բազմել էր պատշգամբում, իսկ սրահում հավաքվել էին մրցման պատրաստ յոթ թագավորազներ: Գեղեցկուհու ձեռքին կար ոսկե խնձոր, որ նա պետք է նվիրեր հաղթողին՝ իր սրտի հետ: Չնայած մեր առջև միայն անավարտ, ծրագրային գրառումներ են, ակներև է բանաստեղծի լիրիկական շունչը նաև նրա սևագիր տողերում և ամենահեռավոր ձևով մենք այստեղ հիշում ենք «հին ժամանակ իր ամրոցում ոսկեղեն» բնակվող և «հեռավոր տեղերեն» իր «երազի ասպետին» սպասող «հուր ու հրաշք աղջկան», որին պատշգամբում տեսնելով մի ականթարթում սիրահարվում է «կանաչ-կտրիչ իշխանը»: «Երբ Մհերը տեսավ Թամարին ոսկե պատշգամբում, ոսկե աթոռին նստած, ոսկե հագուստներով,— ինչ որ յոթն սարի ետևից առավոտու արևը ծագեր, և յոթն ծովերու վրա ծիածան կապեր,— մոտեցավ, գյուրզը դրեց Թամարի պալատի շեմքին, որի աջ և ձախ կողմը՝ առյուծ և վագր կար, իբրև պահապան, շղթայի զարկած,— ասաց բոլորին.— Թամար խաթունը իմ հարսն է, մարդ չիշխնա էս շեմքեն անցնել:

Թամարն ասավ.

Մհեր, Դավթի տղա,
Յոթն քաղավորի տղա եկել են
Ինձ հարս կուզեն իրենց համար,
Ով ու հաղթե— ես նրանն եմ...

Եվ սկսվում է մրցումը»:

Իսահակյանը շատ է խորհել մրցման ձևերի մասին, աշխատելով օգտագործել առավել շատ էպոսային միջադեպեր ու արտահայտություններ:

Այս բաժնին վերաբերող ծրագրային գրառումների և սևագրությունների համագրումը «Սասունցի Դավթի» պատումներին, մեզ բերում է հետևյալ եղրակացություն. էպոսում առավել մեծ տեղ է տրված Դավթի և Խանդուկի սիրո ու ամուսնության նկարագրությանը: Իսահակյանը Մհերի սերը գրելիս օգտու-

7 Ա.վ. Իսահակյան, Ասպետի սերը, Երկերի ժողովածու, հատ. 2, Երևան, 1951, էջ 130:

գործել է նաև Հայոսի երրորդ ձյուղի որոշ մանրամասներ: Հիշենք թեկուզ Մհերի հանդիպումը Գոհարիկի գովքն առնող աշուղներին: Էպոսում այդ փաստը վերաբերում է Դավթին, և Իսահակյանն այն վերագրելով Մհերին, միջադեպն ավելի քնարական է դարձրել⁸: Թերևս այս կապակցությամբ է նա 1930-ական թթ. վերաբերող մի գրառման մեջ կատարել հետևյալ նշումը. «Մհերի սերը գրելիս օգտվել գուսանների սիրու երգերից: Նրանց պատկերներից, մետաֆորներից, բառերից»:

Չափազանց բնորոշ է Իսահակյանի համար ժողովրդական անսուսու նշանների մեջ իրեն հարկավոր, առավել դիպուկ փաստերն ու նրբերանգները թե՛ Դավթի, թե՛ Մհերի ձյուղերից գտնելը և շատ տեղին օգտագործելը: Այսպես, իբրև սիրո և հավատարմության նշան, Խանգութը խնձոր է տալիս փեսացուին կամ աշուղի միջոցով նրան ուղարկում իր մատանին: Իսահակյանի գրառումներում՝ երբ Մհերը հաղթում է մրցասպարեղում, «Թամարը խնձոր նետեց Մհերին» կամ. «Գոհարիկ տվեց (ասենք) մի փունջ մաղ՝ ծամ, կամ (մատնիք)...»:

«Սասմա Մհերի» երրորդ մշակմանը վերաբերող գրառումները և սեագիրը հատվածները ցույց են տալիս, որ Իսահակյանը մտադիր է եղել առավել խորացնելու սոցիալական հակասությունները պոեմի վերջին տառերակում և այդ նպատակով ծրագրել է ավելացնել նոր դրվագներ:

Չար աշխարհի կործանման գաղափարի հաստատման համար անհրաժեշտ էր, որ Մհերը լիներ աշխարհատես, ամենատես. «Երթամ աշխարհ ժուռ գամ, աշխարհ տես-ուս է, բան սորվեմ, աշխարհ ճանչնամ...», — մտորում է նա: Եվ «ինքնաբերաբար, մենասնիկորեն ընկնում է կյանքի հորձանքի մեջ և քարեքար զարկվելով, գնում է և փորձվում», — հավաստում է բանաստեղծը: «Մհերը որոշում է գնալ, աշխարհ շրջել՝ գտնելու ճշմարտությունը, արդարությունը». այս միտքը բանաստեղծը ծրագրում է «Կոնկրետացնելու Հագուստ հագցնելու»: Աշխարհը Մհերի համար դառնում է մի երկար ու ձիգ ճանապարհ, որտեղից լսվում է սրերի զնգոց ու շղթայի շառաչ: Ինչպես մի ժամանակ բանաստեղծի «վշտոտ, խոցված սրտի մեջ» կաթիլ առ կաթիլ հավաքվում էին «անծայր աշխարհի ծով արցունքները» և նա լսում էր «...անվերջ, գիշեր ու ցերեկ ողբ ու հեծեծանք մի՛շտ, ամենուրեք» («...եվ անապատից, հեռու ծովերից...» բանաստեղծությունը)⁹, այժմ Մհերի ականջին էն հասնում ամեն տեղից՝ «հեծեծանք, լաց, ողբ, գանգառ, հառաչանք. — Անոթի ենք, զրկված ենք, ավերված, ավար եղած, կողոպտված, հափշտակված»: Իսահակյանը գրում է. «Մհեր գնում է ճանապարհով և տեսնում է աշխարհի ընթացքը. ձիավոր, ոտավոր, հարուստ, աղքատ, ձոխ, մերկ, շքեղ, բոբիկ... Մեկը քարվանով հաց է տեղափոխում, ալյուր, մյուսը ճամփաներից կուռթ է հավաքում... Քշում են ճորտերին, մշակներին, մտրակի, բրի տակ...»: Իսկ մի պատառիկում բանաստեղծը նշում է. «Իհարկե, պիտի շարիքը խտացնել այդ ճանապարհի վրա տեսածների մեջ»: Եվ երևույթի մեջ խորանալու համար նա հաճախ նույն միտքն աշխատում է արտահայտել մի բանի ձևերով, փորձում է ավելի խտացնել գույները, փնտրում առավել նոր, արտահայտիչ պատկերներ. «Մհերը տեսավ՝ հարկերն էին տանում քարվանով, դեպի Մըսըր, հարկեր հավաքած ողջերից և

⁸ «Սասմա Մհերին» վերաբերող գրառումներում կան բանաստեղծի ձեռքով ժողովրդական մի բանի պատումներից արտագրած հատվածներ՝ «Գուսանների գովքը Խ. Խաթունին» վերնագրամբ:

⁹ Ա. վ. Իսահակյան, — Երկերի ժողովածու, հատ. 1, Երևան, 1951, էջ 182:

մեռելներից» (ընդգծ. մերն է.— Հ. Ա.): Կամ. «Մարդիկ ծանր բեռները շալակին գնում էին, և վարիչները կաշե փոկերը (մսրակ) ձեռքերին քշում էին նը-րանց...»: Մեկ ուրիշ տեղ. «...տեսնում է կառքով անցնում են սրարշավ հա-րուստ մարդիկ, իշխաններ, շքեղ կանայք, փոշի հանելով, իսկ փոշու միջով գնում են բոկոտն խեղճ մարդիկ, երեխաներ, կանայք, աղքատ, նիհար, ցա-մաքած...»: Ճանապարհին տեսած «չարիքները» Մհերին մտորումների առիթ են տալիս. նա անընդհատ մտածում է աշխարհի «վատթար» կառուցվածքի մասին, գնում նույն ճանապարհով ու խորհրդածում. «ճամփին խոսում էր իր մտքի հետ, իր սրտի մեջ, և խոսքն էր ֆրիկի հակադրությունների նման—

Մեկը այսպես, մյուսը այնպես.

Մեկը կուշտ, մեկելը անոթի...

Էս է եղել աշխարհը»:

Այս հետաքրքիր միտքը՝ իբրև ֆրիկյան հայտնի հակասությունների բա-ցահայտման միջոց, նա ավելի կոնկրետացնում է մեկ այլ՝ սևագիր մշակ-ման մեջ.

Մհերը նստել էր ճանապարհին,
ճանապարհին տեսնում էր— աշխարհը:
Անցնում էին մարդիկ բեռներն ուսերին,
Կրաստների պես,
Անցնում էին նժույգների վրա նստած մարդիկ,
Անցնում էին բոքիկ երեխաներ, կանայք,
Անցնում էին կառքերի մեջ նստած...
Քշում էին կառքերը, ձիերը,
Եվ փոշու մեջ թաղում ուխտավորներին.
Անցնում էին իշխան, պարոն, հարուստ,
Անցնում էին աղֆատ, բանվոր, մշակ...
Մհերը նստել էր և նայում էր.
Մհերը նստել էր և միտք էր անում
Աշխարհի բանը—
Մեկն այսպես,
Մյուսն այնպես...

Ուշագրավ է, որ կառուցվածքային առումով երրորդ տարբերակում սրան պետք է հաջորդեր հույժ լիրիկական՝ վայրի հավերթի հետ հանդիպման դրո-վագը. «Վեր կացավ գնաց, տեսավ թռչուններին...»,— վերջացնում է հատվածն Իսահակյանը, ավելի խորացնելով Մհերի խոսքերի իմաստը՝ ուղղված «աղատ ու անպարտ», «ընկերներով ու ախպոր պես ապրող», «ինքնիշխան» հավերթին:

Անգամ օտար նվաճողների դրվագին վերաբերող մի տարբերակում, ինչ-պես տեղում ասել ենք, Մհերը ճանապարհին է հանդիպում թշնամուն՝ Բա-դի-Բուղային, որը հարկեր և գերիներ էր տանելու Տարոնից:

Թե վիպերգի ո՞ր մասերում պետք է տեղագրվեր ճանապարհի դրվագը, այդ մասին հուշում են բանաստեղծի նշումները: Մի տեղ նա գտնում է, որ դա պետք է լինի ռեսին սպանելուց հետո. ֆրիկյան հակասությունների մասին նա մտորում է «աշխարհափորձից, օրինակի համար, ռեսին սպանելուց հետո»:

Կա բավական ուշադրավ մեկ այլ գրառում, ուր Մհերը «գեղապետին սպանելուց հետո գնում է ճամփաներով, տեսնում է անցուղարձին դեպքեր, անիրավ, անգութ, անարդար դեպքեր, զայրանում է, տեսնում է՝ մի խոշոր ու խոթոռ մարդ մտրակով ծեծում է երեք մարդկանց, որոնք ծանր բեռներ ունեն մեջքերի վրա, և դժվարին են շարժվում, ծեծում է գրաստների պես, որ գնան: Մհերը զայրանում է. մտրակն առնում է, մի երկու հատ հարվածում է ծեծողին, որ ընկնում է մեռելի պես գետնին. թափում է մեջքերի բեռը և ասում է՝ «Գնացեք ձեր տները...»: Նրանք անիծում են Մհերին (հանդիմանում են Մհերին), թե՛ մեր տիրոջը սպանեցիր, մենք ո՞ւր գնանք, ո՞վ մեզ հաց կուտա... մեր տունն ավերեցիր...»: Վերջին նախադասությամբ Իսահակյանն այն միտքն է ակնարկում, որ հասարակ ժողովրդի մի մասը դեռևս չի եկել ինքնագիտակցման, չի ձանաչում իր լավն ու վատը և հեռու է իր գոյությունն առանց տերերի ու իշխանների պատկերացնելուց և սա էլ կազմում է նրանց կյանքի շարիքը: Մեջքերումը հետաքրքիր է հենց այս առումով: Նույն միտքն է կրկնում՝ որոշ երանդային տարբերությամբ նաև 1940-ական թթ. մեկ այլ գրառում. այստեղ Մհերը ճանապարհին հանդիպում է շքեղ ձիավոր-իշխանին և ի հակադրություն սրա՝ «լեզուն դուրս ձգած» «ետեից հեհեկ» վաղող ծառային: Մհերը զայրանում է այս տեսնելով և առաջարկում տիրոջը ձիուց իջնել. «Թող հիմա էլ ծառագ դնա...

Աղան զայրանում է, Մհերը բռնում է ձիու սանձից. աղան թուր է հանում, Մհերը գցում է նրան ձիուց վայր և զարկում է գետին, մեռնում է աղան, ծառան լալիս է, ասում. «Չորնա քո ձեռքը, ես հիմա ինչ պատասխան տամ իմ տիրոջը...»:

«Լրացումներ» վերնագրված մի գրառման համաձայն, երբ Մհերը վտարվում է Սասունից (արդեն Գոհարիկի մոտից վերադառնալուց հետո), նա «անորոշ մտքերի մեջ, երերուն, անվճիռ, գնում է ճամփով, մտածելով. քաղցն ու ծարավը ճնշում են նրան...»: Այստեղ Իսահակյանը նորից շատ որոշակի նշում է այս հավելման տեղը՝ կառուցվածքային իմաստով. «Քաղցած հասավ ճապաղջուր, տեսավ ամռան շոգին, ծառի շվաքին մի մարդ ուտում-խմում է...»: Հետաքրքրական են Մհերի մտորումներն այս հատվածում. «ո՞ւր գնալ և ի՞նչ անել. դնա՞լ Գոհար խաթունի մոտ, ի՞նչ երեսով. գնա՞լ քեռանց տունը. քեռին ճամփա ցույց տվեց, խրատ տվեց. գնա՞լ հուր վրեժը առնել Չմշկիկ Սուլթանից. ի՞նչ ագնվություն է՝ կնկա հետ կոխվ մտնել. կնիկ սպանել, քե՞ղ դռնալ հետ՝ հուրեղբորն սպանել. տիրանալ հուր գահին, բայց ինչպես սպանել իր հուրեղբորը, կարելի բան չէ...»: Մեր ընդգծած տողերը նորից վկայում են Մհերի բարոյական, ազնվության մասին, իսկ ամենակարևորը այստեղ էպոսային նոր փաստի օգտագործումն է, կապված Չմշկիկ Սուլթանի հետ, որը չկա վիպերգի ոչ մի տարբերակում, ինչպես և մյուս գրառումներում: Իսահակյանն, ըստ երեւելույթին, մտադրություն է ունեցել անդրադառնալու նաև ժողովրդական բնագրի այս փաստին, սակայն ինչ ձևով կամ ինչ շափով, չենք կարող ասել, քանի որ այն, ըստ մեր ձեռքի տակ եղած նյութերի, մնացել է միայն մտահղացման շրջանակներում: Եվ բնորոշ է, որ այս գրառումներից ամեն մեկում գտնում ենք մի նորություն, թարմ միտք, հետաքրքիր մտահղացում, հաճախ միևնույն հարցի այլատեսակ լուծում, էպոսային նորանոր փաստերի օգտագործում: Մի այլ գրառման մեջ Մհերը՝ Սասունից արտաքսված, «իջնում է Սասունի դաշտ», կանգնում ու մտածում «ճամփաբաժնին — քառուղիի վրա»: Ճանա-

պարհներից մեկը տանում էր Սասուն, մյուսը՝ քեռանց տուն, երրորդը՝ Գոհարիկի մոտ (այստեղ և միայն այս դեպքում՝ Բաղաց աշխարհ)։ Չորրորդ ճանապարհը տանում է «հեռուները, ծովերի կողմը», և որոշում է դյուցազնը այն ընտրել, զնալ «հեռուներ, մարդիկ տեսնելով, աշխարհներ տեսնելով...»։ Այստեղ Իսահակյանը նոր դրվագ է նախատեսում, կապված Մհերի քեռիների հետ («քեռանց մոտ չի գնա. դրկող են...»)։

Ճանապարհի դրվագը, վիպերգի երրորդ տարբերակում, ըստ երևույթին պետք է նախորդեր Մհերի հանրահայտ կոչին՝ անարդար աշխարհի դեմ ելնելու և այն վերափոխելու, ուստի Իսահակյանն անհրաժեշտություն է զգացել այս միջոցով ավելի հիմնավորելու Մհերի գայրույթն ու բողոքը։ Ճանապարհին տեսնելով «աշխարհի բոլոր աղետները», նա եզրակացնում է, որ «մինչև աշխարհը չքանդվի մի դիր, ու նորեն շինվի, մարդը չի ազատվի շար լծեն, բանտեն, հացի կարոտեն» և գնում է, «բերդ է շինում ու Սասուն (այս գործին ձեռնարկում է, երբ տեսնում է շարիքի լրումը— բանվոր տղայի ջախջախվելը), մոռանում է Գոհարիկի սերը, խոստումը՝ այդ վշտի ու վճռի տակ, քեռու մոտ ֆնալը, և ուղղակի բերդ շինելուն է ձեռք դարկում»։

Ժամանակի սոցիալական հակամարտության առավել արտահայտիչ նկարագրման, «շարիքը ավելի խտացնելու» նպատակով Իսահակյանը դիմում է մի պատկերի, որը չկա վիպերգի նախորդ տարբերակներում, սակայն տեղ էր գտել բանաստեղծի պոեզիայում դեռևս 1905 թ.։

Տեսնում եմ արցունք ժպտի հետ հյուսված,
Հացի հետ արյուն— վիշտ համատարած...¹⁰։

Մեր այս ընդգծած միտքն է, որ տեղ է գտել «Սասմա Մհեր» վիպերգի երրորդ մշակմանը վերաբերող գրառումներում՝ տարբեր ձևերով և երանգներով։ Անցնելով ճանապարհներով և ականատես լինելով մարդկային դառը, չարքաշ կյանքին, Մհերը մտածում է, որ «Աշխարհի հացը արյունոտ է, թե որ ճմլես, արյուն պիտի կաթե, և վերցնում է նա իր թեփից մի կտոր հաց և սեղմում է. արյուն է կաթում...»։ Նա գալիս է տխուր եզրակացության, որ «ուր մատդ դարկես էս աշխարհի մեջ՝ արյուն կծորես»։

Արյուն է լոկ կերած հացը աշխարհի.

Աղֆատ, հարուստ տեր ու ծառա,
Արյուն կա ձեր կերած հացի մեջ.—

հավաստում է մեկ այլ պատառիկ։

Իսկ 1940-ական թթ. մի գրառման մեջ Մհերն ինքը լսում է ճանապարհին մարդկանց բողոքը, թե՛

Անեծֆ է մեր կյանքը,
Դառն ապրուստ.
Արյուն կա մեր կերած հացի մեջ։

Ելք է փնտրում Մհերը, փրկություն. «Կա՞ մի աշխարհ, ուր մարդը ազատ լինի, արյուն չթափվի, շար չլինի, հացն առանց արյունի լինի...»։ Նրա երա-

¹⁰ Նույն տեղում։

դաժ աղատ ու ճշմարիտ աշխարհում հացի մեջ այլևս արյուն չպետք է լինի, այլ «երբ սեղմես հացը՝ արյունի տեղ կաթ ծորե», իբրև արդարության խորհրդանիշ։ Այս մտորումներով Մհերը հասնում է Պղնձե քաղաք։

Բացի ճանապարհի դրվագից, Իսահակյանը ծրագրել է խորացնել սոցիալական հակասության փաստերը նաև վիպերգի մյուս գրվագներում։ Հիշենք 1938 թ. առանձին հրատարակության հեղինակային ուղղումները. գրքի իր օրինակի համապատասխան էջին բանաստեղծը կցել է հետևյալ հավելումը.

Մհեր օգնում է գուքանավորներին,
Վառում է գուքանը առապարներով.
Նրան վարձի համար մի հաց են տալիս, մի շուր հաց.
Մհերը սեղմում է, ու փշրե,
արյուն է կաթում հացից...
Անձնահուր Մհերն է վառում հողը:
Էնտեղեն Մհեր ելավ զարհուրած
Զվեց ու հասավ Պղնձե քաղաք։

Ինչպես երևում է մեջբերման և էպոսի պատումների համադրումից, բանաստեղծը մտադիր է եղել օգտագործելու Ս. Հայկունու գրի առած «Դավիթ և Մհեր» պատումի¹¹ «Մհերի շատակերությունն ու գութան անելը» դրվագը, իհարկե, որոշ փոփոխությամբ։

Ի դեպ, էպոսի մյուս պատումներում նույն դրվագը պատմվում է նաև Դավիթի վերաբերմամբ։ Ինչպես տեսնում ենք, Իսահակյանը վերոհիշյալ տարբերակից վերցրել է Մհերի՝ գութանավորներին օգնելու, նրանցից հաց խնդրելու փաստերը միայն, թերևս ձգտելով Մհերի մեջ ավելի խորացնել աշխատավորական գիծը և ապա կրկնել է գրառումներում արտահայտած միտքը՝ հացից արյուն կաթելու մասին։ Նույն՝ 1938 թ. առանձին հրատարակության մեջ վիպերգի վերջին գրվագին վերաբերող ուղղումներից երևում է, որ նա ծրագրել է նույն միտքը կրկնող հետևյալ տողերը ավելացնել հովվի և Մհերի դրույցի գրվագում.

Մարդու էերած ավուր հացեն
Սեղմես արուն կուգա՞ նորեն.
— Հա, էդպես է. ագնանց Մհեր,
— Նորե՞ն ուսմիկ դառ կդառի... և այլն։

Նույն միտքը ավելի խորացված ձևով է արտահայտվում 1938 թ. տպագրությանից հետո կատարած մեկ այլ գրառման մեջ.

Մի կտոր հաց տուր,
Տեսնեմ նորե՞ն
Արյուն կուգա ավուր հացեն։

Ծերունին տալիս է ուսի թևից մի կտոր հաց։ Սեղմում է Մհերը, արյուն է կաթում.

— Դե՛հ, դա՛րձ գնա քո շար աշխարհ...

¹¹ «Մասնա ծոր», հատ. Ա, ԺԳ պատում, էջ 699։

Հետաքրքիր նրբերանգ. մի տեղ հարցնում է, այդպե՞ս է արդյոք, իսկ մյուսում՝ փորձում և տեսնում, հացի արյունը դիտելով որպես շար աշխարհի պատկերավոր արտահայտություն:

Այն դրվագում, ուր Մհերը Պղնձե քաղաքում իր խոսքն է ուղղում «իր սրտին ու աշխարհին», Իսահակյանը (1941 թ. հունիսի 10-ի գրառման համաձայն) ավելացնում է «...մինչև չքանդվի աշխարհ մեկ հեղ և չշինվի աշխարհ նորեն— ձեզ չկա ազատում...» միտքը, ծրագրելով, ըստ երևույթին, այն տեղավորել՝ «Կը շինեք հար դուրք ու դարբաս, ու ձեզ համար լուծ ու անուր զնդան ամուր...» տողերից հետո, քանի որ մեջբերված նախորդ նախադասությունից հետո գրում է. «Երթամ շինեմ բերդ ու պատվար...», ինչպես որ է երկրորդ տարբերակում:

1944 թ. հունվարի 17 թվագրությամբ տարբերակ-պատառիկում Իսահակյանն ավելի ճիշտ է համարում, եթե Մհերը օտար նվաճողների դեմ կռվից՝ «մարցիններին կոտորելով հետապնդելուց» հետո անցնի Պղնձե քաղաքի միջով և այդ ամենի «գումարը այն է լինում, որ վճում է՝ կռվել»: Առավել շեշտելու նպատակով Մհերի պայքարի, ծրագրերի դժվարությունը, բանաստեղծը գրում է, որ ամենուրեք Մհերին հիշեցնում են աշխարհի օրենքի՝ «աստծո դուռի» մասին, և՛ այն ժամանակ, երբ նա խոսքն ուղղում է աշխատավոր մարդկանց (Պղնձե քաղաքում), և՛ երբ գնում է Սասուն ու կռվի կանչում կտրիճներին: «Ի՞նչ կռիվ, ի՞նչ զոռ, աշխարհի դուռը էդպես է, աստծու կարգը էսպես է. աստված աշխարհը էսպես է դրել— հարուստ ու աղքատ, իշխան ու ռամիկ, տեր ու ծառա». և հենց այդ է, որ անարդար է գտնում Մհերը ու առանց վախենալու օրենքից ու պատժից, գտնելով, որ «աստծու դուռը մարդուն չի փրկում», առաջարկում է քանդել աստծո ստեղծած օրենքը և աղատել մարդուն:

Իսահակյանի նպատակներից մեկն էլ եղել է Մհերի կերպարի առավել կատարելագործումը, իր խոսքերով՝ «բյուրեղացումը», նրա բնավորության ու էության հիմնական գծերի ավելի հիմնավորումն ու ընդգծումը, որոշ իմաստով նաև՝ ավելացումը: Ամենափոքր մանրամասներով ու փաստերով բանաստեղծն աշխատում է ավելի գործուն դարձնել Մհերին, ինչպես նաև մեղմել նրա բնավորության որոշ խստությունները, դաժանությունը: Բանաստեղծը գիտակցաբար հրաժարվել է Մհերի մարդկային նկարագրի վրա ազդող էպոսային որոշ փաստերից, ավելացրել նոր դրվագներ ու փաստեր՝ առավել կատարյալ դարձնելու Մհերի «վսեմ ու մարգարեական կերպարը»:

Ելնելով հայկական էպոսի բուն ոգուց, Իսահակյանը ձգտել է վիպերգի երրորդ մշակման ժամանակ առավել ուժեղացնել Մհերի կերպարի որոշ հիպերբոլիկ գծեր՝ նրա բնատուր ուժը ընդգծելու նպատակով, ստեղծելով միևնույն ժամանակ գեղարվեստորեն արտահայտիչ պատկերներ:

Վիպերգի վերջին մշակման ընթացքում Իսահակյանն աշխատել է ավելի ընդլայնել Մհերի հասարակական իդեալը. եթե սկզբում դուրացազնին մտահոգում էր միայն ռամկի վիճակը, հիմա նա մտածում է ընդհանրապես մարդանհատի ազատության մասին, որն ավելի մեծ ընդհանրացում է. «Ոչ միայն ռամիկը լինի աղատ, այլ ավելի բարձր և ընդհանուր գաղափարով— «Մարդը լինի աղատ, տեր իր հացին»: Սա է դառնում Մհերի հավատամքը, որը ազատ ու արդար աշխարհի ստեղծման գաղափարի հետ տարբեր երանգավորումներով կրկնվում է բանաստեղծի զրառումներում:

Ասենք նաև, որ վիպերգի նոր մշակման ընթացքում Իսահակյանին զբաղեցրել է ոչ միայն նոր դրվագների, հավելումների ու փոփոխումների հարցը, այլև ստեղծագործական վարպետության կատարելագործումը: Ինչպես առաջին տարբերակի մշակման ժամանակ, այս գրառումներում ևս նա հաճախ մի քանի անգամ անդրադառնում է միևնույն բառին, դարձվածքին, դրվագին, ինչ որ բաներից չգոհանալով (երբեմն վերադառնալով նորից նախկինին), էպոսին հարազատ մնալու ձգտումով և կատարյալը, ամենալավն ու արտահայտիչը ստեղծելու միտումով:

ТРЕТИЙ НЕЗАКОНЧЕННЫЙ ВАРИАНТ ПОЭМЫ
АВЕТИКА ИСААКЯНА «МГЕР ИЗ САСУНА»

А. С. АБЕГЯН

(Резюме)

1000-летний юбилей эпоса «Давид Сасунский» послужил поводом для нового обращения А. Исаакяна к своей поэме «Мгер из Сасуна», над которой он работал до конца своей жизни. Многочисленные черновые страницы, относящиеся к последней редакции поэмы, рукописные заметки, а также отдельные поправки и замечания, сделанные в тексте издания 1938 г., свидетельствуют о продолжительных поисках поэта и дают основание предположить, что Исаакян рассчитывал дополнить поэму новыми главами: а) борьба Мгера против иноземных захватчиков; б) любовь Мгера.

Заметки и черновые отрывки, относящиеся к третьей редакции, показывают, что Исаакян предполагал углубить показ социальных противоречий в последнем варианте поэмы и с этой целью планировал ввести новые эпизоды. Одной из задач поэта было совершенствование образа Мгера, подчеркивание основных черт его личности, стремление расширить общественный идеал Мгера.